

## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

### Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում առկա վիճակի և կատարված աշխատանքների վերաբերյալ

2015թ. մարզում կատարված ուսումնասիրությունների արդյունքում թարմացվել է ոլորտի տեղեկատվական շտեմարանը, որի տվյալները նպաստում են բաժնի աշխատանքներին որոշակի ուղղվածություն տալու համար:

2016 թվականի հունվարի 1-ի դրությամբ մարզի մշտական բնակչությունը կազմում է 53 .849 մարդ, որից տղամարդ՝ 26.602, կին՝ 27.247, մինչև 18 տարեկան երեխաները կազմում են ընդհանուր ազգաբնակչության 19.9%-ը կամ 10.722 երեխա: Համայնքներում կատարված ուսումնասիրության արդյունքներով մարզում հաշվառված է 15763 ընտանիք:

Ուսումնասիրության և համայնքներում գործող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների հետ համատեղ աշխատանքի արդյունքում հաշվառվել է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված 268 երեխա, 2015 թվականին կատարվել է 96 երեխայի կարիքի գնահատում, նրանց վերաբերյալ տեղեկատվությունը գրանցվել է <<Նորք>> տեղեկատվական կենտրոնում, թարմացվել է 3 երեխայի վերաբերյալ տեղեկատվական փաթեթը:

<< Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին >> ՀՀ օրենքի 14 և 15 հոդվածների պահանջների համաձայն մանկուց հաշմանդամ կամ հաշմանդամ դարձած 122 երեխա ստանում է ներառական կրթություն մարզի հանրակրթական 6 դպրոցներում՝ Երևանի բժշկահոգեբանամանկավարժական կենտրոնի (ԲՄՀ) եզրակացության և մարզպետարանի վկայագրման հիման վրա: 2015թ. վկայագրվել է 47 և վերավկայագրվել 75 երեխա:

Մարզի տարածքում բնակվող տարբեր պատճառներով առանց ծնողական խնամքի մնացած (ԱԾԽՄ ) 23 երեխայի (2015 թվականին՝ 1) և 10 ԱԾԽՄ թվին պատկանող անձանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով սահմանվել է խնամակալություն և հոգաբարձություն: Վերջիններս իրենց կարգավիճակին համապատասխան ստանում են սոցիալական աջակցություն: ԱԾԽՄ 3 երեխա կենտրոնացված հաշվառման է վերցվել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից բնակարանի հերթագրման և կարիքի բավարարման համար: 2016թ. հունվարի դրությամբ հանրապետության մանկատներում և գիշերօթիկ խնամքի հաստատություններում է գտնվում մարզի առանց ծնողական խնամքի մնացած 14 երեխա, հատուկ դպրոցներում՝ 9-ը, ցերեկային խնամքի կենտրոնում՝ 2-ը, կենսաբանական ընտանիք է վերադարձել 2 երեխա: Մարզում հանրակրթությունից դուրս մնացած երեխաներ չկան, դպրոցահասակ բոլոր երեխաներն ընդգրկված են հանրակրթական համակարգում:

Ոստիկանության տարածքային բաժինների անչափահասների գործերով զբաղվող ծառայությունների հետ համագործակցության արդյունքում մարզում անչափահասների իրավախախտման դեպքերը կրճատվել են: 2015 թվականի ընթացքում պրոֆիլակտիկ քարտային հաշվառման մեջ է գտնվել 7 անչափահաս, կանխարգելման, դաստիարակչական աշխատանքների շնորհիվ այժմ հաշվառման մեջ է՝ 4-ը: Իրավախախտ երեխաների նկատմամբ սահմանվել է հսկողություն, նշանակվել շեֆ -դաստիարակ, կազմակերպվել է հանդիպումներ ծնողների հետ, լուծվել նրանց զբաղվածության խնդիրը: ՀՀ Ոստիկանության պետի 2013թ. նոյեմբերի 7-ի №3837 – Ա հրամանով ստեղծված միջգերատեսչական աշխատանքային խմբի հետ մուրացկանության և թափառաշրջիկության, անչափահասների թրաֆիկինգի խնդիրների կանխարգելման և իրազեկման նպատակով իրականացվել են հանդիպումներ, զրույցներ ուսումնական

հաստատություններում, առողջապահական հիմնարկներում և համայնքներում: Մարզում չկան մուրացիկ և թափառաշրջիկ, շահագործման (թրաֆիկինգի) ենթարկված երեխաներ:

2015թ. որդեգրման համար բաժին է դիմել է 2 քաղաքացի: Ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում իրականացվել է որդեգրման 1 գործընթաց, իրավական հիմքերի բացակայության պատճառով մերժվել է երկրորդ դիմումը:

Մարզում ավելի հաճախակի են դարձել ամուսնալուծության դեպքերը, ընտանեկան հակասությունները, որի արդյունքում ավելի շատ տուժում են երեխաները: Վերջիններս գտնվելով ծնողներից մեկի մոտ՝ լիարժեք դաստիարակություն չեն ստանում, քանի որ առանձին դեպքերում խախտվում է ՀՀ Ընտանեկան օրենսգրքի 54 և 56-րդ հոդվածների պահանջները, խոչնդոտվում երեխայից առանձին ապրող ծնողի իրավունքները՝ երեխայի դաստիարակության հարցում:

Իրականացված աշխատանքների շնորհիվ մարզի 10 կոնֆլիկտային ընտանիքների տրվել է խորհրդատվական, դրամական և նյութական աջակցություն մարզի իրավապահ մարմինների, մարզպետարանի, հասարակական կազմակերպությունների, անհատ անձանց կողմից /Փոռ1, Մալիշկա 2, Զառիթափ 1, Աղնջաձոր 1, Ելփին 1, Եղեգնաձոր 3, Արտաբույնք 1/:

Ակտիվ աշխատանքներ են կատարվել մարզում կանանց և տղամարդկանց իրավահավասարության քաղաքականության իրականացման ուղղությամբ: Գենդերային հիմնահարցերով զբաղվող մշտական հանձնաժողովը տարվա ընթացքում հրավիրել է 4 նիստ, կազմել համապատասխան արձանագրություն: Մարզի համայնքներին է տրամադրվել ՀՀ-ում կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների իրավիճակային գնահատման մեթոդաբանության ձեռնարկը, իրականացվել է մեթոդական աշխատանք խոշոր համայնքներում՝ համայնքային զարգացման ծրագրերի կազմման ժամանակ գենդերային բաղադրիչի ներառման ուղղությամբ:

Բաժինը սերտորեն համագործակցել է երեխաների իրավունքների պաշտպանության և կանանց հիմնախնդիրներով զբաղվող տեղական և միջազգային հասարակական կազմակերպությունների («Շուշան», «Երիտասարդ ընտանիքի աջակցության կենտրոն», «Սոցիալ-հոգեբանական հետազոտությունների և վիճակագրության կենտրոն», «ՀՕՄ»-ի Եղեգնաձորի մասնաճյուղի, «Հույս 98», «Երիտասարդ սերունդ» «Երեխաների պաշտպանության ցանց >>, «Մարդկային զարգացման միջազգային կենտրոն» «Սեյվ դը չիլդրեն»>>) հետ, մասնակցել նրանց կողմից կազմակերպված սեմինարներին, վերապատրաստման դասընթացներին, աջակցել մարզում իրականացվող ծրագրերի ներդրմանն ու կյուր սեղանների անցկացմանը, օգտագործել նրանց հնարավորությունները:

Մարզի սոցիալապես անապահով ընտանիքներից 2015թ. երեք երիտասարդ աղջիկներ (Սալիի, Զառիթափի և Կեչուտի համայնքներ) միջին մասնագիտական կրթություն են ստանում «Հուսո այգի >> բարեգործական հիմնադրամի կենտրոնում:

2015թվականի ընթացքում ԸԿԵԻՊ բաժինը մասնակցել է Վայոց ձորի մարզի 15 համայնքների վարչական հսկողության աշխատանքներին, ժամանակին և սահմանված կարգով 34 քաղաքացիներից ստացած դիմումներին տվել է համապատասխան լուծում:

Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի  
ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների  
պաշտպանության բաժնի պետ՝

Ա.Գրիգորյան

21.01.2016թ.